ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԴԻԼԲԱԵՎ ԺԱԼԳԱՍ ԺՈՒՄԱՅԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ. ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
(1991–2016 ԹԹ.)

Է.00.02-«Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2018

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ, պրոֆեսոր Գ.Գ. Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ. պրոֆ. Ա. Ա. Մելքոնյան

պ.գ.թ. դոցենտ Ժ. Ս. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. դեկտեմբերի 28-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 16 նոյեմբերի 2018 թ.:

Մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար՝ պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 1991թ. դեկտեմբերին Խորհրդային Միության փլուզումը միջազգային հարաբերություններում հանգեցրել է էական փոփոխությունների: Նախկին խորհրդային հանրապետությունները, անկախության ձեռքբերմամբ և ազգային պետություններ հռչակվելով, բախվել են բազմաթիվ ներքին եւ արտաքին խնդիրների: Հետխորհրդային երկրները, այդ թվում՝ Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրները, ստիպված էին կառուցել ձևով և բովանդակությամբ սկզբունքորեն տարբեր հարաբերությունների ոչ միայն միմյանց, այլ նաև արտաքին դերակատարների (պետությունների, ինտեգրացիոն կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների) հետ:

Ավանդաբար Ղազախստանը և Հայաստանն անկախության ձեռքբերման շրջանից սկսած հավատարիմ են մնացել պրագմատիկ բազմավեկտոր (բազմակողմանի) արտաքին քաղաքականությանը՝ կարողանալով չշրջանցել Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Եվրոպական Միության և Չինաստանի շահերը: Երկու երկրների արտաքին քաղաքականության այս հայեցակարգը, առաջին հերթին, կապված է այս երկրների անվտանգության խնդրի հետ: Անցյալի պատմական ընդհանրությունները, ընդհանուր խորհրդային անցյալը, ինչպես նաև անկախությունից հետո Ղազախստանի և Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացման նմանատիպ ուղիները նպաստեցին, որ երկու երկրներն էլ միանան ընդհանուր ինտեգրացիոն միություններին:

Ազգային անվտանգության ապահովումը, հատկապես Հայաստանի ու Ղազախստանի տնտեսական և արդյունաբերական ճգնաժամի համատեքստում, նպաստեցին, որ երկու երկրների արտաքին քաղաքականության կենտրոնում լիներ ինտեգրումը և համագործակցությունը մասնավորապես հետխորհրդային տարածքում:

Հայաստանի և Ղազախստանի միջև արդեն ստորագրվել են ավելի քան 20 պայմանագրեր, որոնք սահմանում են կարևոր ռազմական-քաղաքական և տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև: Այս հարաբերությունների հիմքում ընկած էր 1999 թվականի սեպտեմբերի 2-ի «Բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիրը:

Ընդհանրապես, Ղազախստանի և Հայաստանի արտաքին քաղաքականության համակարգը ձևավորող տարրերն ունեն ընդհանուր գործոններ, որոնք պայմանավորում են դրանց բնույթը: Ցանկացած պետության համար արտաքին քաղաքականության, այդ թվում՝ տնտեսական քաղաքականության կառուցումը անհնար է առանց հաշվի առնելու միջազգային դերակատարների շահերը: Անկասկած, ուսումնասիրվող երկրների համար այս իմաստով կարևորագույն դերակատարություն ունի Ռուսաստանը: Հայաստանի, Ղազախստանի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական համագործակցության ամուր հիմքերը ստեղծեցին բարենպաստ պայմաններ

նշված երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման համար, որն ի վերջո հանգեցրեց պաշտոնական Երևանի՝ 2015 թ. հունվարի 1-ին Եվրասիական տնտեսական միության նախագծին միանալուն:

Միևնույն ժամանակ երկու երկրների արտաքին քաղաքականության ուղենիշներում հաշվի են առնվում համաշխարհային հիմնական խաղացողների՝ ԱՄՆ-ի, Եվրամիության և Չինաստանի ազդեցությունը, ովքեր ևս ունեն հետաքրքրվածություն Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Այս իրավիճակում Ղազախստանն ու Հայաստանը բավականին նման հնարավորություններ ունեն հետագա զարգացման համար՝ հաշվի առնելով իրենց առաջնահերթությունները և շահերը: Այս իրավիճակում, հաշվի առնելով տարածաշրջանային մարտահրավերների և գոյություն ունեցող խնդիրների ընդհանրությունները, Երևանի և Աստանայի միջև երկկողմ համագործակցությունը կարծես թե առաջնային է փոխշահավետ գործընկերության առումով: Այս համագործակցությունը կարող է ծառայել որպես երաշխիք երկու երկրների ազգային շահերի համար տարածաշրջանային ինտեգրման գործընթացների համատեքստում:

Հայ-ղազախական հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված այս աշխատանքը Հայաստանի և Ղազախստանի միջև երկկողմ և բազմակողմ համագործակցության բավական լայն շրջանակ (1991-2016 թթ.) ընդգրկող առաջին համապարփակ գիտական աշխատանքն է: Աշխատանքը հնարավորություն է տալիս հիմնավորել հայ-ղազախական ռազմաքաղաքական համագործակցության պատմական արդիականությունը և օգտագործել առկա խնդիրները և մարտահրավերները՝ լուծելու երկկողմանի փորձը եվրասիական ինտեգրացիոն նախագծերի իրականացման գործում:

Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև ռազմաքաղաքական, առևտրատնտեսական եւ հումանիտար համագործակցությունն է՝ երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչև Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը:

Ուսումնասիրության թեման ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, մշակութային և հումանիտար ոլորտներում հայ-ղազախական երկկողմ համագործակցության զարգացման ներկա փուլն է:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է վերլուծել Ղազախստանի և Հայաստանի միջև երկկողմ համագործակցությունն ազգային հետաքրքրքությունների շրջանակում, ինչպես նաև երկու երկրների փոխհարաբերությունների հետագա խորացման հնարավորությունները ռազմաքաղաքական, առևտրատնտեսական և մշակութային-հումանիտար համագործակցության համատեքստում:

Ատենախոսական աշխատանքի առջև դրված խնդիրներն են՝

-ուսումնասիրել թեմայի վերաբերյալ հայ-ղազախական փոխգործակցության վերաբերյալ առկա պատմական աղբյուրները,

- ներկայացնել երկկողմ հարաբերությունների զարգացման հիմնական ուղղությունները,

- սահմանել տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների ազդեցության աստիճանը միջպետական փոխգործակցության վրա

- վերլուծել Ղազախստանի և Հայաստանի կարևորության աստիճանը խոշոր աշխարհաքաղաքական դերակատարների հետաքրքրությունների շրջանակներում՝ հաշվի առնելով նաև ուսումնասիրության առարկա հանդիսացող երկրների դերը տարածաշրջանում,

- ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի պատմական ժառանգությունը Ղազախստանի ժողովրդի հետ ընդհանուր մշակութային էթնոգենեզի օրինակով

- ուսումնասիրել երկու երկրների մշակութային և հումանիտար փոխգործակցության մակարդակը ներկա փուլում և դրա ազդեցությունը քաղաքական համագործակցության վրա:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1991-2016 թվականները: Ժամանակագրական առումով հետազոտության սկզբնական շրջանը ընդգրկում է երկու երկրների անկախության շրջանը: Մինչդեռ ուսումնասիրության՝ ժամանակագրության առումով վերին սահմանը պայմանավորված է 2015 թվականի հունվարի 2-ին Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությամբ, ինչն արդյունք էր հետխորհրդային տարածքում ուսումնասիրվող երկրների միջև փոխշահավետ ռազմաքաղաքական համագործակցության:

Հետազոտության աղբյուրները: Գիտական ատենախոսությունը գրելիս օգտագործվել է պատմական աղբյուրների լայն շրջանակ: Աղբյուրների առաջին խումբը կազմում են միջազգային պայմանագրերը, որոնց կողմ են հանդիսանում ուսումնասիրվող երկրները. Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված նորմատիվ-իրավական ակտերը, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել երկու երկրների միջև հարաբերությունների իրավական հիմքերը, ինչպես նաև նախագահների, նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարների ելույթները, ուղերձները, հրապարակումներն ու հայտարարությունները, որոնք վերաբերում են սույն աշխատանքի թեմային:

Աղբյուրների երկրորդ խումբը կազմում են Ղազախստանի և Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքականության հիմնական հայեցակարգային փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի շարքին են դասվում Հայաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգը, Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգը, 2017-2022 թթ. Հայաստանի կառավարության ծրագիրը, «Ղազախստան-2050» ռազմավարական ծրագիրը, Ենթակառուցվածքների զարգացման «Nurly zhol» 2015-2019թթ. համար նախատեսվող պետական ծրագիրը, Մինչև 2020թ. Ղազախստանի Հանրապետության զարգացման ռազմավարական ծրագիրը, Արդյունաբերական-ինովացիոն զարգացման պետական ծրագիրը,

Ղազախստանի Հանրապետության նախագահի մանիֆեստը «Խաղաղություն. XXI դար», Ղազախստանի նախագահի՝ «Ղազախստանի երրորդ արդիականացումը. գլոբալ մրցունակություն» ուղերձը, ՂՀ նախագահ Նուրսուլթան Նազարբաևի «Հասարակական գիտակցության արդիականացումը. հայացք դեպի ապագա» ծրագրային հոդվածը, Ղազախստանի Հանրապետության արտաքին քաղաքականության 2014-2020թթ. հայեցակարգը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը քաղաքական ուղերձը:

Երրորդ խումբը բաղկացած է արխիվային փաստաթղթերից, որոնք պահվում են Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական արխիվներում, ինչպես նաև հին ձեռագրերից, որոնք պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարան:

Չորրորդ խումբը կազմում են դիվանագիտական փաստաթղթերը, միջազգային և տարածաշրջանային գիտաժողովի նյութերը, վերլուծական կենտրոնների, ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտների և ոչ պետական կազմակերպությունների կողմից պատրաստված փաստաթղթերը:

Հինգերորդ խումբը կազմում են ազգային վիճակագրական գործակալությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող վիճակագրական տվյալներին վերաբերող փաստաթղթերն ու ուղեցույցերը:

Գիտական մշակվածության աստիճանը: Ուսումնասիրվող թեմայի ընտրությունը պայմանավորված է վերջինիս արդիականությամբ, ինչպես նաև Ղազախստանի և Հայաստանի միջև երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցերի ոչ բավարար չափով ուսումնասիրությամբ: Թեմաների պատմական վերլուծությունը կատարվել է ղազախ, հայ, ռուս և արևմտյան գիտնականների ուսումնասիրության հիման վրա: Այս թեմայի պատմագիտական վերլուծության ժամանակ օգտագործվել է խնդիր-լուծում մոտեցումը, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների կողմից և ինտերնետային տիրույթում հրապարակվող պարբերականները:

Ղազախստանյան պատմագրություն. Ղազախստանի Հանրապետության՝ միջազգային հարաբերություններին վերաբերող հարցերի ուսումնասիրության գործում մեծ է հետազոտական կենտրոնների, պետական գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների դերը: Ղազախստանի պետական պաշտոնյաների թվում նախևառաջ պետք է առանձնացնել Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի աշխատանքները:: Նազարբաևի հոդվածներում նկարագրվում է Ղազախստանի՝ որպես անկախ պետության զարգացման ճանապարհը, երկրի ներքին և արտաքին քաղաքականության գերակայությունները, Ղազախստանի դերը հարևան երկրների հետ միջպետական համագործակցության և հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում:

Աշխատանքներում հատուկ ուշադրության է արժանացել ժողովուրդների և դավանանքների միջև փոխհամաձայնությանն ուղղված քաղաքականությունը, ինչպես նաև ժողովուրդների միջև մշակութային-հումանիտար համագործակցության կարևորությունը: Բացի այդ, հատուկ կարևորության է արժանի ՂՀ Խորհրդարանի սենատի նախագահի, ՄԱԿ գլխավոր քարտուղարի նախկին տեղակալ Կ. Տոկաևի՝ Ղազախստանի արտաքին քաղաքականությանը, դրա ձևավորմանն ու զարգացման հեռանկարներին վերաբերող աշխատանքները: Նրա աշխատանքներում առկա է երկրի արտաքին քաղաքականության ձևավորման ուղղությունների, Ղազախստանի և նախկին Խորհրդային Միության երկրների, այդ թվում Հայաստանի Հանրապետության հետ երկկողմ հարաբերությունների զարգացման գործընթացների խորը վերլուծություն:

Անհրաժեշտ է նաև ընդգծել Ղազախստանի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատողների ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են Կենտրոնական Ասիայում աշխարհաքաղաքական իրավիճակին, համաշխարհային և տարածաշրջանային առաջնորդների արտաքին քաղաքական ռազմավարությանն ու Եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացներին:

Ղազախստանի արտաքին քաղաքականության ուսումնասիրության գործում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Ալ-Ֆարաբիի անվան Ղազախստանի ազգային համալսարանի, Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանի, Նազարբաևի համալսարանի գիտնականների, ինչպես նաև դիվանագիտական և գիտական շրջանակների, վերլուծական և հետազոտական ինստիտուտների ու կենտրոնների ներկայացուցիչների ուսումնասիրությունները:

Հարկ է նշել, որ ղազախստանյան հետազոտողների մենագրությունները, որոնք ուղղակիորեն չեն վերաբերում մեր ուսումնասիրությանը, ամեն դեպքում հնարվորություն են տալիս վերլուծել և հասկանալ Ղազախստանի հետ երկկողմ հարաբերությունների զարգաման ներուժի չափը և հայ-ղազախական պատմագրության ներկա փուլը հարստացնել նոր ուղղություններով և գերակայություններով:

Սույն ուսումնասիրության հետաքրքրության շրջանակներում են Ս. Սատուբալդինայի, Չժեն Կուն Ֆուի, Տ. Մանսուրովայի, Ա. Ակիմովայի, Բ. Ախմետգալիևայի, Ն. Իսինգարինայի աշխատանքները:

Հայ պատմագրություն. Հայաստանի և Ղազախստանի անկախացումից իվեր երկկողմ հարաբերությունների գլխավոր թեման հայկական պատմագրության մեջ ներկայանում է երկրի ղեկավարի դիվանագիտական կորպուսի, քաղաքագետների և փորձագետների՝ միջազգային հարաբերությունների համատեքստում արված ելույթների և հայտարարությունների տեսքով:

Հայ գիտնականների մի շարք աշխատանքներ նվիրված են Հայաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների, թյուրքական աշխարհի միջև հարաբերություններին և համագործակցությանը, ինչպես նաև հայատառ հին ղփչաղերեն ձեռագրերի ուսումնասիրությանը: Այս առումով հատուկ կարևորության են արժանի Ա.Սաֆարյանի, Լ.Սահակյանի, Գ.Մելիքյանի և Ա.Սիմոնյանի աշխատությունները: Գրականության գիտական վերլուծությանը, ինչպես նաև Ղազախստանին և հայ-ղազախական հարաբերություններին են նվիրված Շ. Խաչատրյանի և Ն. Մկրտչյանի աշխատանքները: Հայ-ղազախական փոխգործակցության ուսումնասիրության գործում շարունակում է կարևոր ուղղություն մնալ ղփչաղների պատմական ժառանգությունը: Խորհրդային շրջանում և դրանից հետո նույնպես Ռուսաստանի, Հայաստանի և Ղազախստանի գիտնականները շարունակում են ուսումնասիրել հին ղփչաղերեն ձեռագրերը, որոնք պահվում են Երևանում՝ հնագույն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ «Մատենադարան»-ում:

Ռուսական պատմագրություն. Ռուսական աղբյուրները վերլուծության են ենթարկում Ղազախստանի և Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունները, տարածաշրջանում դրանց դերակատարությունը, Ռուսաստանի արտաքին քաղաքական նախագծերին և եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացներին նրանց մասնակցությունը: Բացի դրանից, ներկայացված են արխիվային նյութերի և պատմական աղբյուրների ուսումնասիրությանը վերաբերող խնդիրների գիտական գնահատականը:

Մի շարք ռուս հետազոտողներ շարունակում են ուսումնասիրել հայ-ռուսական հարաբերությունների ներկա վիճակը և զարգացման հեռանկարները, երկու երկրների միջեւ ինտեգրացիոն գործընթացները և տարածաշրջանային համագործակցությունը: Այս առումով հիշատակության են արժանի ռուս հետազոտողներից Ի. Բասկակովի, Վ. Բելոկրենիցկիի, Վ. Խլյուպինայի, Կ. Մեշերյակովայի, Ա. Վլասովայի աշխատությունները:

Հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում ինտեգրացիոն կազմակերպությունների (ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ), ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության խնդիրների և Հարավային Կովկասում Հայաստանի դերի ուսումնասիրության շրջանակներում համանման խնդրիներին են անդրադառնում Շ. Աղաբաբյանը, Մ Ախտամզյանը, Օ.Գալուստյանը, Վ. Կարդումյանը, Ա. Կրիլովը, Ն. Պոլյակովը, Վ. Տոգանյանը:

Արևմտյան պատմագրություն. Հետխորհրդային տարածքում արածաշրջանային համագործացկության, եվրասիական ինտեգրման գործընթացի, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում անվտանգության թեմատիկային են նվիրված մի շարք արևմտյան գիտական հրապարակումներ, խոսքը մասնավորապես Ս. Կորնելի, Մ. Օլքոթթի, Թ. Դե Վալի, Ա. Միրզոյանի, Ջ. Պերովիչի, Ֆ.Ժ. Դրեյֆյուսի մասին է: **Ուսումնասիրության մեթոդական հիմքը.** աշխատանքում օգտագործվում է համակարգային վերլուծություն մեթոդը, որը թույլ է տալիս բացահայտել

ուսումնասիրության թեմա հանդիսացող շրջանի էությունը միաժամանակ տարբեր կողմերից և որոշել ուսումնասիրվող օբյեկտների երկկողմ հարաբերությունների ու փոխհամագործակցության բնորոշ առանձնահատկությունները: Այս մեթոդը նշանակալի առավելություններ ունի, ինչը առաջին հերթին, պայմանավորված է հանգամանքով, որ կա հնարավորություն ուսումնասիրել խնդիրները քաղաքական, տնտեսական և այլ տեսանկյուններից: Այսինքն՝ այս մեթոդը թույլ է տալիս քննել այդ հարաբերությունները տարբեր հարթություններում, մասնավորապես քաղաքական հարցերի վերլուծության ժամանակ հաշվի առնել առևտրատնտեսական, մշակութային և հումանիտար գործոնները, որոնք ունեն որոշակի ազդեցություն ուսումնասիրության խնդրի վրա: Այս մեթոդաբանական մոտեցումը թույլ է տալիս ուսումնասիրել թեման տարբեր տեսանկյուններից և ստանալ հնարավորինս օբյեկտիվ արդյունքներ:

Աշխատանքում կիրառված է նաև միջդիսցիպլինար մոտեցում, որն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով ուսումնասիրության համակարգային բնույթը: Պետք է նշել, որ ուսումնասիրվում է ոչ միայն միջազգային հարաբերությունների ոլորտը, այլ նաև երկու երկրների տնտեսությունը, մշակույթը և պատմությունը: Ուսումնասիրվել են նաև երկկողմ հարաբերությունների կարևոր սոցիալական և քաղաքական իրադարձությունները, որոնք տարբեր ժամանակահատվածներում տեղ են գտել ուսումնասիրվող օբյեկտների զանգվածային լրատվամիջոցներում:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել Ղազախստանի և Հայաստանի արտաքին քաղաքականության հետագա համատեղ ուսումնասիրության, ինչպես նաև երկու երկրների քաղաքական ուղղությունների ուսումնասիրության և վերլուծության համար: Բացի այդ, հետազոտական նյութերը կարող են ընդգրկվել բարձրագույն ուսումնական հաստատությունների դասագրքերում:

Գիտական նորույթը և պաշտպանության ենթակա դրույթները: Աշխատանքի գիտական նորույթը Ղազախստանի և Հայաստանի երկկողմ հարաբերությունների մակարդակը ներկա փուլում նորովի գնահատելն է: Ուսումնասիրվել է Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական գործընթացները ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և հումանիտար համագործակցության համատեքստում, որոնք տեղի են ունենում Հայաստանում և Ղազախստանում, ինչպես նաև դրանց աղդեցությունը մակարդակն ու բնույթը երկու երկրների միջև փոխհարաբերությունների վրա: Հաշվի առնելով վերլուծությունը, ի հայտ են բերվել հետևյալ դրույթները, որոնք պետք է հիմնավորվեն.

1. Ներկայումս հայ-ղազախական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: Ղազախսանյան ու հայ գիտնականները իրականացնում են շատ քիչ համատեղ գիտական ծրագրեր: Մեծամասամբ աշխատանքները վերաբերում են երկկողմ

հարաբերությունների թեմատիկային միջազգային խաղացողների (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, ԵՄ և այլ) փոխհարաբերությունների համատեքստում: Մինչդեռ ներկայումս կան անհրաժեշտ նախադրյալներ սեփական առաջնահերթությունների և հետաքրքրությունների իրականացման հնարավորության համար՝ հաշվի առնելով նաև աշխարհակալ տերություններ չհամարվող երկու երկրների երկկողմ համագործակցության կարևորությունը: Այս համատեքստում, Ղազախստանի եւ Հայաստանի գիտնականները պետք է ակտիվացնեն երկկողմ հարաբերություններին առնչվող հարցերի ուսումնասիրությունը՝ նպատակ ունենալով օգտագործել Հայաստանի եւ Ղազախստանի միջև երկկողմ համագործակցության հնարավոր ներուժը:

2. Այսօր Ղազախստանի միջկրոնական և միջմշակութային համերաշխության մոդելը բնութագրվում է որպես աշխարհում ամենահաջողվածներից մեկը: Իր հերթին, արտերկրում գտնվող հայկական սփյուռքը առավել ակտիվներից մեկն է Ղազախստանում և հանդես է գալիս որպես յուրօրինակ միջնորդ Հայաստանի Հանրապետության և միջազգային հանրության միջև: Միևնույն ժամանակ Ղազախստանում հայկական սփյուռքը կարող է ծառայել որպես միջմշակութային կամուրջ և փոխշահավետ համագործակցությունը խթանելու և իրականացնելու ուժ:

3. Խորհրդային տարիներին գործում էր միջմշակութային եւ ազգամիջյան փոխգործակցության հաջողված մոդել: Սակայն հետխորհրդային շրջանում այդ կապերը խզվեցին: Առաջանում է անհրաժեշտություն վերականգնելու Ղազախստանի և Հայաստանի գիտական շրջանակների կապերը գիտության և մշակույթի տարբեր ոլորտներում կուտակված ձեռքբերումների փոխանակման նպատակով, ինչը կարող է ծառայել որպես հիմք երկու երկրների միջև ամուր ինստիտուցիոնալ կապերի համար:

4. Ղազախստանի և Հայաստանի կրթության և գիտության նախարարություններն ունեն իրավական հիմքեր երկկողմ գիտական համագործակցության ներուժի իրականացման համար: Ղազախստանի՝ Հայաստանում պատմագիտական հետաքրքրությունների շրջանակն առաջին հերթին ընդգրկում է հնագույն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում պահվող հին ղփչաղերեն ձեռագրերի ուսումնասիրությունը: Հեղինակն ուշադրություն է հրավիրում այս խնդրի հետագա խորը ուսումնասիրության անհրաժեշտության վրա, որը, իր հերթին, կարելի է համարել որպես միասնական հենք մշակութային և հումանիտար համագործակցություն իրականացնելու գործում, քանի որ մեծ է ղազախական կողմի հետաքրքրությունը: Հաշվի առնելով երկու երկրների հարաբերությունների խորացման տեսական և գիտական մեծ կարևորությունը՝ ղազախստանյան կողմը պետք է քննարկի հին ղփչաղերեն ձեռագրերի ուսումնասիրության գիտահետազոտական կենտրոն բացելու հարցը, որի աշխատանքներում պետք է ներգրավել նաև թյուրքագետ մասնագետների Հայաստանից:

5. Ներկայումս Երևանի պետական համալսարանում գործում է Ղազախստանի լեզվի, պատմության, մշակույթի և գրականության կենտրոն, ինչպես նաև Ղազախական գրականության կենտրոն Հայաստանի Ազգային գրադարանում: Ղազախստանի լեզվի, պատմության, մշակույթի և գրականության կենտրոնի շրջանակներում թյուրքալեզու ժողովուրդների մշակույթ և լեզուներ ուսումնասիրող ուսանողներին որպես ընտրովի դասընթաց դասավանդվում է ղազախերեն և ղազախ գրականության պատմություն: Մինչդեռ Ղազախստանում, որտեղ, տարբեր աղբյուրների համաձայն, ապրում են մոտ 25-30 հազար հայեր, չկան պետական աջակցություն ունեցող կենտրոններ: Հենց այդ կենտրոններն են, որ նպաստում են ժողովուրդների միջև մշակութային փոխհարաբերությունների զարգացմանը: Այս համատեքստում ղազախական կողմը հավասարության սկզբունքով պետք է քննարկի Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանում նմանատիպ՝ Հայոց պատմության, լեզվի և մշակույթի կենտրոնի, ինչպես նաև Ղազախստանի Ազգային ակադեմիական գրադարանում Հայ գրականության կենտրոնի բացման հնարավորությունը:

6. Միջպետական փոխգործակցության հիմնական տարրերից մեկն էլ մշակութային և հումանիտար փոխգործակցությունն է: Պետք է նշել, որ խորհրդային շրջանում եղել են Խորհրդային Միության ժողովուրդների մշակույթների փոխադարձ հարստացման ուղղությամբ աշխատող մեխանիզմներ և ինստիտուտներ: Այս մեխանիզմի շնորհիվ ԽՍՀՄ քաղաքացիները կարող էին ծանոթանալ եղբայրական ժողովուրդների գրական ստեղծագործությունների լայն շրջանակի հետ: Այս մոտեցումը կարող է կիրառելի լինել նաև ներկայումս երկու երկրների միջպետական հարաբերություններում: Պետք է հաշվի առնել թարգմանչական բյուրոների ստեղծման հնարավորությունը, որոնք կներկայացնեն դասական և ժամանակակից գրականության ստեղծագործությունները ղազախերեն և հայերեն:

7. Ինչպես հայտնի է, Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն ու Հայոց ցեղասպանությունը ճանաչելուն ուղղված քայլերն են: Պետք է նշել, որ Ղազախստանի դիվանագիտությունը միջազգային ասպարեզում բավական ակտիվ է որպես միջնորդ՝ տարբեր միջազգային և տարածաշրջանային հակամարտությունների, այդ թվում՝ «սառեցված» հակամարտությունների կարգավորման գործում: Դրա վերջին վառ օրինակներից են սիրիական բանակցությունները, որոնք պարբերաբար անցկացվում են Աստանայում: Ղազախստանի կողմից ձեռք բերված դրական փորձը կարող է օգտագործվել հայկական կողմի կողմից՝ նպաստելու հակամարտության կարգավորման առաջնահերթություններին: Ինչպես հայտնի է, Ղազախստանը որոշակի ազդեցություն ունի Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքական համակարգերի վրա: Այսպիսի մեկ այլ օրինակ է ռուս-թուրքական

հակամարտության կարգավորման գործում Ղազախստանի ունեցած դերակատարությունը:

Բացի այդ, Ղազախստանի դիրքորոշումը լիովին համապատասխանում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում պաշտոնական Երևանի ակնկալիքներին: Ղազախստանը հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բացառապես խաղաղ միջոցներով կարգավորելու դիրքերից, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին և ԵԱՀԿ Մինսկի խմբին համապատասխան միջոցների կիրառման դիրքերից: Ղազախստանը հույս ունի, որ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված քայլերը կշարունակվեն, և դատապարտում է այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են լարվածության և բարդացնում են իրավիճակը:

Անհրաժեշտ է, որ հայկական կողմը քաղաքական խորհրդակցություններ անցկացնի Ղազախստանի հետ վերոհիշյալ հակամարտության կարգավորման հնարավոր լուծումները գտնելու համար՝ օգտագործելով Ղազախստանի միջազգային հարթակը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ:

8. Ինչպես հայտնի է, Ղազախստանի և Հայաստանի միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների ներուժը չի օգտագործվում լիովին օբյեկտիվ պատճառներով: Այս ուղղությամբ երկու երկրներն էլ աշխատում են ակտիվացնել առևտրատնտեսական համագործակցությունը: Կողմերը շահագրգռված են երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալների ավելացմամբ: Հարկ է նշել, որ 2016թ. Ղազախստանի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառությունը աճել է 46% -ով: Դրան հիմնականում նպաստել է երկու երկրների անդամակցությունը ԵԱՏԳ-ին: Առևտրի ցածր մակարդակի հիմնական պատճառներից են երկու երկրների՝ դեպի ծով ելք չունենալը, ընդհանուր սահմանի բացակայությունը, Հայասատանի տրանսպորտային շրջափակում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, ինչպես նաև ռուսական արտադրողների մրցակցության պայմաններում Ղազախստանի ապրանքների և ծառայությունների ոչ մրցակցային լինելը: Երկրները պետք է գտնեն նոր հնարավորություններ փոխադարձ առևտրի ապահովման համար, ներդնեն նոր բարձր տեխնոլոգիաներ, որպեսզի բարձրացնեն Եվրասիական շուկայում ապրանքների և ծառայությունների մրցունակությունը:

9. Պետք է նշել, որ ներկայումս Հայաստանում առկա են ապրանքների եւ ծառայությունների շուկաները դիվերսիֆիկացնելու համար համապատասխան տնտեսական և լոգիստիկ նախադրյալներ: Նմանատիպ օրինակ կարող ծառայել Իրանի հետ սահմանի վրա՝ Մեղրի քաղաքում ազատ առևտրի գոտու ստեղծումը: Հեղինակը կարծում է, որ այս նախագիծը թույլ կտա, որ Հայաստանը դառնա Իրանից դեպի ԵԱՏՄ երկրներ և հակառակը, Իրանից ԵՄ և հակառակը ուղղությունների հատման կետ: Իր հերթին, Ղազախստանն ունի հատուկ աշխարհատնտեսական դիրք և կարող է դառնալ տարանցիկ երկիր ԵԱՏՄ-ի

երկրների և «Նոր Մետաքսի ճանապարհի» համար: Արդեն այսօր Չինաստանի հետ սահմանին Ղազախստանն ունի ազատ տնտեսական գոտի՝ «Խորգիս»-ը, որը 2017 թ. առաջին կեսին շրջանառել է 5 մլն տոննա բեռ: Ինչպես երևում է, երկու երկրներն ունեն բարձր տրանսպորտային և բեռնափոխադրման ներուժ, և այս ոլորտում ճիշտ քաղաքականությունը երկու երկրներին կարող է դարձնել տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների առումով տարածաշրջանային առաջատարներ:

10. Մինչև 2015 թ. Հայաստանում, ինչպես նաև Ղազախստանում, գործում էր պետական իշխանության կառավարման նախագահական ձևը: Սակայն, 2015 թ. Համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով Հայաստանում տեղի են ունենում սահմանադրական փոփոխություններ, և 2018թ. երկիրն անցնում է խորհրդարանական կառավարման մոդելի: Միևնույն ժամանակ սկզբին 2017թ. Ղազախստանում նախագահն իր ուղերձում բարձրաձայնում է նախագահական որոշ լիազորություններ կառավարությանը փոխանցելու և կառավարման խորհրդարանական ձևին անցնելու մասին: Այս համատեքստում, հեղինակն առաջարկում է միջպետական համագործակցության անհրաժեշտ մակարդակը պահպանելու նպատակով ամրապնդել միջխորհրդարանական համագործակցությունը, քանի որ հետխորհրդային տարածքում միջպետական համագործակցությունը կենտրոնացած է հիմնականում միջկառավարական կապերի և պետությունների ղեկավարների միջև հարաբերությունների վրա: Միջպետաան հարաբերություններում վակուումից խուսափելու համար հեղինակն առաջարկում է ամրապնդել երկու երկրների միջև միջխորհրդարանական համագործակցությունը:

Ատենախոսության փորձագիտական հենքը կազմում է Ղազախստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Պետական արարողակարգի գլխավոր ծառայության ղեկավարի, Արտաքին գործերի նախարարության հատուկ հանձնարարականով դեսպանորդի, Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանի խորհրդական-դեսպանորդի պաշտոններում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում Ղազախստանի մշակույթի, լեզվի, պատմության և գրականության կենտրոնում դասախոս աշխատելու ժամանակ ձեռք բերված փորձառությունը:

Ատենախոսության ձեռք բերած եզրակացություններն ու վերջնարդյունքները տեղ են գտել Հայաստանում և Ղազախստանում տպագրվող գիտական ամսագրերում, Մոսկվայում, Կազանում, Նիժնիյ Նովգորոդում կայացած միջազգային գիտաժողովներում և ֆորումներում, ինչպես նաև Հայաստանում և Ղազախստանում զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում:

Հետազոտության արդյունքները ներկայացվել են հետևյալ գիտաժողովներում

1. Գիտական սիմպոզիում «Ռուսաստանն ու թյուրքական աշխարհը. պատմամշակութային կապեր», Ելաբուգա, 21-22 ապրիլ 2016թ.

2. Միջազգային գիտա-գործնական գիտաժողով նվիրված Ղազախստանի Հանրապետության անկախացման 25ամյակին, Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան, Մոսկվա, 2016թ.

3. Միջազգային գիտա-գործնական գիտաժողով նվիրված Ն. Տուրեկուլովայի 123-ամյակին, Թուրքեստան, 2017թ.

4. Միջազգային գիտա-տեսական գիտաժողով «Թյուրքական աշխարհն ու միջազգային հարաբերությունները. պատմություն, անհատականություն և ապագա», Աստանա, մայիսի 26-27, 2017թ.

5. Միջազգային գիտա-գործնական գիտաժողով « Ալիշեր Նավոիի ստեղծագործական ժառանգությունն ու ներկան», Լոմոնոսովի անվան ՄՊՀ, Մոսկվա, մարտ, 2018թ.

6. Միջազգային թյուրքագիտական գիտաժողով «Թյուրքական աշխարհն ու քաղաքակրթությունը: Լեզվի, գրականության, պատմության և կրոնի հետ կապված հիմնախնդիրները», Ելաբուգա, ապրիլի 13-14, 2018 թ.

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է ուսումնասիրության գլխավոր առարկային և նպատակին: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, աշխատանքի գիտական նորույթը, դրա տարածքային և ժամանակագրական ընդգրկման շրջանակը, ուսումնասիրության առարկայի նպատակն ու առաջ քաշված խնդիրները, ներկայացված է աղբյուրագիտական հենքը, սահմանված է առաջ քաշված թեմայի ուսումնասիրության աստիճանը, դրա տեսական և գործնական նշանակությունը, հիմնավորված է ուսումնասիրության հայեցակարգային միավորի օգտագործումը:

Առաջին գլուխը՝ «**Ղազախստանը և Հայաստանը ներկա փուլում. հարաբերությունների զարգացման հիմնական ուղղությունները և միջպետական համագործակցության մեխանիզմները»,** նվիրված է հետխորհրդային ժամանակաշրջանում հայ-ղազախական հարաբերությունների զարգացմանը: Վերլուծության է ենթարկված 1990-ականների սկզբին Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև համագործակցությունը, 21-րդ դարի սկզբում դրա վերածումը «ռազմավարական գործընկերության», ինչպես նաև ռազմական-քաղաքական, տնտեսական, առևտրային և մշակութային երկկողմ հարաբերությունների հետագա խորացումը:

Առաջին ենթագլուխը՝ «Քաղաքական և ռազմական համագործակցությունը Ղազախստանի և Հայաստանի միջև», նվիրված է Հայաստանի

Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև ռազմական-քաղաքական ոլորտում համագործակցության ներկա փուլին:

Երկրորդ ենթագլուխը՝ «Ղազախստանի և Հայաստանի առևտրատնտեսական և ներդրումային համագործակցության զարգացումը», նվիրված Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության է առևտրա-տնտեսական և ներդրումային համագործակցության ներկա փուլին:

